

**ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ՍԱԿԱԳՆԵՐ
(Ֆիզիկական անձանց համար)**

ԱՎԱՆԴ «ՊԱՐԶ» ԵՎ ԱՎԱՆԴ «ՃԿՈՒՆ»

			Անվանական տարեկան տոկոսադրույք / ժամկետի ավարտին տոկոսագումարների վճարմամբ/					
Ժամկետ (ամիս)	1-2	3-5	6-8	9-11	12-14	15-23	24-30	31-36
ՀՀ ԴՐԱՄ*								
Ավանդ «Պարզ»	4.0%	6.0%	7.5%	8.0%	8.75%	9.20%	9.30%	9.40%
Ավանդ «Ճկուն»	---	---	6.5%	6.5%	7.75%	7.95%	8.25%	8.25%
ԱՄՆ ԴՈՒՍՐ*								
Ավանդ «Պարզ»	0.5%	2.25 %	3.0%	3.5%	4.0%	4.25%	4.35%	4.50%
Ավանդ «Ճկուն»	---	---	2.5%	3.0%	3.25%	3.50%	4.0%	4.0%
ԵՎՐՈ								
Ավանդ «Պարզ»	---	0.5%	1.25%	1.5%	2.0%	1.75%		
Ավանդ «Ճկուն»	---	---	0.75%	1.0%	1.5%	1.5%		
ՌՈՒԲԼԻ								
Ավանդ «Պարզ»	0.5%	4.75 %	5.75%	6.25 %	6.5%	6.0%		
Ավանդ «Ճկուն»	---	---	4.75%	5.25 %	5.5%	5.0%		

*_Ջեռակառավարման համակարգերով`

- ՀՀ դրամով ավանդների ներդրման դեպքում կիրառվում է սահմանված տոկոսադրույք +0.25% սակագինը մեկ տարի և ավել ժամկետով ներդրվող ավանդների համար
- ԱՄՆ դոլարով ավանդների ներդրման դեպքում կիրառվում է սահմանված տոկոսադրույք +0.15% սակագինը մեկ տարի և ավել ժամկետով ներդրվող ավանդների համար

Տոկոսների վճարման պարբերականությունը

- 3 ամիս և ավել ժամկետով ավանդ ներդնելու դեպքում տոկոսագումարները կարող են վճարվել ամսական` համապատասխան սանդղակից 0.5 նիշով պակաս տոկոսադրույքով:
- 15 ամիս և ավել ժամկետով ավանդ ներդնելու դեպքում տոկոսագումարները կարող են վճարվել տարեկան` համապատասխան սանդղակից 0.25 նիշով պակաս տոկոսադրույքով:
- Վճարված տոկոսագումարները չեն կապիտալացվում:

Ավանդի համալրում

- «Պարզ» ավանդը կարող է համալրվել առանց գումարային սահմանափակման` բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին երեք ամիսների:
- «Ճկուն» ավանդը չունի համալրելու հնարավորություն:

Ավանդի պակասեցում/ խզում

- «Պարզ» ավանդի գումարը պայմանագրային ժամկետից շուտ ետ պահանջելու դեպքում կուտակված տոկոսագումարի նկատմամբ կկատարվի վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
- «Ճկուն» ավանդի գումարը պայմանագրային ժամկետից շուտ մասնակի կամ ամբողջությամբ ետ պահանջելու դեպքում մնացորդի նկատմամբ կշարունակի հաշվարկվել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը, իսկ խզվող/մասնակի ելքագրվող գումարի նկատմամբ կկատարվի տոկոսագումարի վերահաշվարկ ստորև ներկայացված սանդղակով

ԽՉՄԱՆ ԱՄԻՍ**	ՎԵՐԱՅԱՇՎԱՐԿԻ %
Մինչև 3 ամիս	տվյալ պահին Բանկում գործող «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով
3-ից (ներառյալ) մինչև 6 ամիս	պայմանագրով սահմանված տոկոսադրույք «-3%»-ով***
6-ից (ներառյալ) մինչև 12 ամիս	պայմանագրով սահմանված տոկոսադրույք «-2%»-ով***
12 ամիս (ներառյալ) մինչև 24 ամիս	պայմանագրով սահմանված տոկոսադրույք «-1%»-ով***
24 ամիս (ներառյալ) և ավելի	Կիրառվում է պայմանագրով սահմանված տոկոսադրույքը***

** երկարաձգված ավանդների դեպքում սկսած պայմանագրի երկարաձգման պահից

*** սակայն ոչ պակաս քան «Ցպահանջ» ավանդի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով

Ավանդի ներդրման համար անհրաժեշտ գումարի նվազագույն չափը՝

- ՀՀ դրամի համար՝ 100,000 ՀՀ դրամ,
- ԱՄՆ դոլարի համար՝ 200 ԱՄՆ դոլար,
- Եվրոյի համար՝ 200 Եվրո,
- Ռուբլիի համար՝ 10,000 Ռուբլի:

Մինևույն հաճախորդի/հաճախորդների խմբի գծով համախառն 100,000,000 ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող յուրաքանչյուր ավանդի ընդունման, ինչպես նաև դրա տոկոսադրույքը և այլ պայմանները որոշվում են անհատական՝ Բանկի կողմից:

ԱՎԱՆԴ «ՑՊԱՀԱՆՁ»

ԺԱՄԿԵՏ	ԱՆԺԱՄԿԵՏ
AMD/USD/EUR/RUB	0.1%

«Ցպահանջ» ավանդի ներդրման պայմանները հետևյալն են.

- «Ցպահանջ» ավանդի տոկոսագումարները չեն կապիտալացվում:
- Ավանդատուն իրավունք ունի ավանդային պայմանագրի գործողության ընթացքում համալրել և նվազեցնել ավանդային հաշիվը:
- «Ցպահանջ» ավանդի գծով կուտակված տոկոսագումարները վճարվում են կիսամյակային հաճախականությամբ:
- «Ցպահանջ» ավանդի ներդրման համար անհրաժեշտ գումարի նվազագույն չափ չի սահմանվում:
- «Ցպահանջ» ավանդային հաշվին փոխանցված (անկանխիկ մուտքագրված) միջոցների կանխիկացման դեպքում գանձվում է կանխիկացման սակագին՝ համաձայն «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից 29.02.2016թ. հաստատված «03-LI-21 Բանկային հաշվի «Ստանդարտ» սակագնային պլան ֆիզիկական անձանց համար» փաստաթղթի:
- «Ցպահանջ» ավանդի տոկոսադրույքը Բանկի կողմից կարող է վերանայվել՝ կապված շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետ: Տոկոսադրույքի փոփոխման հետևանքով մինչ այդ վճարված կամ կուտակված տոկոսագումարները չեն վերահաշվարկվում:
- Մինևույն հաճախորդի/հաճախորդների խմբի գծով համախառն 100,000,000 ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող յուրաքանչյուր ավանդի ընդունման, ինչպես նաև դրա տոկոսադրույքը և այլ պայմանները որոշվում են անհատական՝ Բանկի կողմից:

Այլ պայմաններ

1. Սույն սակագները և «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից 29.02.2016թ. հաստատված «03-CN-06 Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը միասին հանդիսանում են «Ինեկոբանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց մատուցվող բանկային ավանդների միասնական տեղեկատվական ամփոփագիր:
2. Սույն Սակագներում օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստն, ինչ «Ինեկոբանկ» ՓԲԸ Բանկային սպասարկման հիմնական պայմաններում:
3. «Մանկական ավանդ» ավանդատեսակի համար տոկոսադրույքը սահմանվում է «Պարզ» ավանդին հավասար՝ միայն գործող «Մանկական ավանդ» ավանդների վերաձևակերպման և երկարաձգման համար:

Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսագումարների հաշվարկման օրինակներ՝

Ավանդի գումար՝ 1,000,000 ՀՀ դրամ

Հարկում՝ 10% տոկոս եկամտից

Ավանդի ժամկետ՝ 12 ամիս (365 օր)

Տոկոսագումարների վճարումը՝ ժամկետի վերջում, իսկ «Ցպահանջ» ավանդի դեպքում՝ կիսամյակային:

«Պարզ» ավանդը համալրվել է 90-րդ օրը 500,000 ՀՀ դրամով

«Ճկուն» ավանդը ամբողջությամբ խզվել է 130-րդ օրը (5-րդ ամսում)

«ՑՊԱՀԱՆՁ»

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 0.1%:

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} \times 0.1\% \times 364^*(\text{օր})}{365}$$

365

$$-10\% \text{ եկամտային հարկ} = 897.5 \text{ ՀՀ դրամ}$$

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կկազմի 0.1%:

«ՃԿՈՒՆ»

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7.75 %:

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} \times (7.75\% - 3\%) \times 128^*(\text{օր})}{365}$$

365

$$-10\% \text{ եկամտային հարկ} = 14,993 \text{ ՀՀ դրամ}$$

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կկազմի 7.75 %:

«ՊԱՐԶ»

Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 8,75%:

$$\frac{1,000,000 \text{ ՀՀ դրամ} \times 8,75\% \times 364^*(\text{օր})}{365}$$

365

$$-10\% \text{ եկամտային հարկ} = 78,534$$

$$\frac{500,000 \text{ ՀՀ դրամ} \times 8,75\% \times 275^*(\text{օր})}{365}$$

365

$$-10\% \text{ եկամտային հարկ} = 29,666$$

$$\text{Ընդհանուր՝ } 80,778 + 30,514 = 111,292 \text{ ՀՀ դրամ}$$

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը կկազմի 8,75%:

* Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 907 հոդվածի 1-ին կետի, ավանդի ներդրման/համալրման և վերադարձման կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրերին ավանդի գումարի նկատմամբ տոկոսագումար չի հաշվարկվում: